ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/01

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.01.2019թ. թիվ 26-3/97-19 գրությամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին (այսուհետ՝ Ֆ/Ա) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 25.12.2018թ. թիվ 01/61-26389 գրության հիման վրա, 09.01.2019թ. Ֆ/Ա Իշխան Միրզոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 25.12.2018թ. թիվ 01/61-26389 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Ֆ/Ա Իշխան Միրզոյանը (այսուհետ՝ Մասնակից):

Մասնակիցն ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն Մասնակցին ծանուցվել է հրավերով սահմանված ժամկետում համակարգի միջոցով ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բութագիրը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկաացրել է առաջարկվող ապրանքի տեխնիկական բութագիրը, որը համաձայն գնահատող հանփնաժողովի որոշման չի համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական պայմաններին, բացակայել ապրանքի հստակ նկարագիրը: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի՝ ծանուցվել է Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, և գնահատող հանձնաժողովն առաջնորդվելով Կարգի 48-րդ կետի դրույթի պահանջներով՝ մասնակցի հայտը մերժել է, ու փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում եմ Մասնակցի նկատմամբ նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Երևանի քաղաքապետարանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն քաղաքապետարանի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>Ֆ/Ա Իշխան Միրզոյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ֆ/Ա Իշխան Միրզոյանը (այսուհետ՝ նաև Ընկերություն) 17.01.2019թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Ֆ/Ա Իշխան Միրզոյանը (այսուհետ նաև՝ Ֆ/Ա կամ մասնակից) մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) և 12-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 10.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի հիմնական նկարագիրը և չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Աճուրդի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով, որոշել է ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովի 14.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից 12-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ապրանքի հիմնական նկարագիրը, սահմանված ժամկետում մասնակցի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, համակարգում կցվել է այլ պատվիրատուի համար մատակարարվելիք ապրանքի ֆայլ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված հայտը՝ 12-րդ չափաբաժնի մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, Ֆ/Ա Իշխան Միրզոյանը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և 12-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Գնահատող հանձնաժողովի 10.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի հիմնական նկարագիրը և չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Իսկ, արդեն գնահատող հանձնաժողովի 14.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից 12-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ապրանքի հիմնական նկարագիրը, սահմանված ժամկետում մասնակցի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, համակարգում կցվել է այլ պատվիրատուի համար մատակարարվելիք ապրանքի ֆայլ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված հայտը՝ 12-րդ չափաբաժնի մասով:

Հայտնում ենք, որ նշված ժամկետում Ֆ/Ա Իշխան Միրզոյանը միաժամանակ մասնակցում էր երկու մրցույթի և երկու մրցույթով ներկայացնում փաստաթղթեր, և պատահաբար շփոթելով փաթեթները՝ Երևանի քաղաքապետարանին է ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված մրցույթի ապրանքի տեխնիկական բնութագիրը:

Արդյունքում Ֆ/Ա Իշխան Միրզոյանը տեղեկացվել է, որ ներկայացված շտկումը այլ մրցույթի է վերաբերվում, սակայն անհնար է դարձել eauction.armeps.am համակարգի միջոցով այլևս ուղարկել այլ փաստաթուղթ՝ նույն օրը, այն է՝ 11.12.2018թ.: Ֆ/Ա Իշխան Միրզոյանը Հավելված 3-ի շտկված տարբերակը ուղարկվել է Պատվիրատուի էլ. հասցեին՝ artsrun.vardanyan@yerevan.am:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել այն հանգամանքը, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը իրականացրել է հնարավոր բոլոր քայլերը՝ շտկված Հավելված 3-ը Պատվիրատուին ուղարկելու համար և քանի որ աճուրդային համակարգը թույլ չի տվել ևս մեկ անգամ փաստաթուղթ կցել և ուղարկել, այդ իսկ պատճառով այն ուղարկվել է Պատվիրատուի էլ. հասցեին, արդյունքում ենթադրել ենք, որ գնահատող հանձնաժողովը կգնահատի էլ. հասցեին ուղարկված շտկված Հավելված 3-ը:

Հարգելի պարոն Սարգսյան, խնդրում ենք Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով

նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը քննելիս՝ հաշվի առնել, որ իրականում Մասնակիցը ձեռնարկել է բոլոր միջոցները՝ շտկված փաստաթուղթը գնահատող հանձնաժողովին սահմանված ժամկետում ներկայացնելու համար, սակայն համակարգային խնդրի պատճառով այդ փաստաթղթերը երկրորդ անգամ հնարավոր չի եղել ուղարկել աճուրդի միջոցով:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ֆ/Ա Իշխան Միրզոյանը և լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/01 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 09.01.2019թ. թիվ 26-3/97-19 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 25.12.2018թ. թիվ 01/61-26389 գրությունը և կից փաստաթղթերը, ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 28.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 և 10.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 6 և 14.12.2018թ. ժամը 16:30-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրությունները, Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից 17.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ նաև Աճուրդ) մասնակցության հայտ է ներկայացրել Ֆ/Ա Իշխան Միրզոյանը:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ N 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, բավարարում է ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին

տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 28.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության.

- 4-րդ կետով որոշել է Աճուրդի 12-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել Ֆ/Ա Իշխան Միրզոյանին:

- 5-րդ կետով որոշել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը 10.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության.

- 1.2 կետով արձանագրել է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի հիմնական նկարագիրը և չի համապատասխանում հրավերի պահանջներին:

- 1.3 կետով արձանագրել է, որ մանակիցների կողմից սահմանված ժամկետում (մեկ աշխատանքային օր) նշված անհամապատասխանությունները շտկելու դեպքում ներկայացված հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Հանձնաժողովը.

- 14.12.2018թ. ժամը 16:30-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ սահմանված ժամկետում Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից չի շտկվել առկա անհամապատասխանությունը, համակարգում կցվել է այլ պատվիրատուի համար մատակարարվելիք ապրանքի ֆայլ և որոշել է Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ նշված աճուրդին զուգահեռ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը մասնակցել է նաև մեկ այլ մրցույթի և երկու մրցույթներով սահմանված ժամկետում պետք է ներկայացներ որակավորման

չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Ֆ/Ա-ի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ երբ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովը արձանագրել է, որ ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ և հնարավորություն է տվել շտկելու առկա անհամապատասխանությունները, Ֆ/Ա Իշխան Միրզոյանը պատահաբար շփոթելով փաթեթները՝ Երևանի քաղաքապետարանին է ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված մրցույթի ապրանքի տեխնիկական բնութագիրը: Այնուհետև, երբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը տեղեկացել է, որ շտկման արդյունքում ներկայացված տեխնիկական բնութագիրը վերաբերելի է այլ մրցույթի, այլևս չի կարողացել շտկում կատարել, քանի որ անհնար է դարձել eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկել այլ փաստաթուղթ՝ նույն օրը (11.12.2018թ.) Ֆ/Ա Իշխան Միրզոյանը շտկված տարբերակը ուղարկել է ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում նշված էլ. փոստի հասցեին, այն է՝ artsrun.vardanyan@yerevan.am:

Ֆ/Ա Իշխան Միրզոյանի ներկայացուցիչը համակարգչի միջոցով բացեց ishxanmirzoyan@mail.ru էլեկտրոնային հասցեն և որպես ապացույց Բողոքներ քննող անձին ցույց տվեց, որ 11.12.2018թ. պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող բոլոր փաստաթղթերի շտկված տարբերակը ուղարկել է ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում նշված էլ. փոստի հասցեին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն

մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:
- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):
- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Հրավերի 7.10 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել՝

ա. առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.

բ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

գ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)

դ. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը Երևանի քաղաքապետարանին 11.12.2018թ. ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված մրցույթի ապրանքի տեխնիկական բնութագիրը, սակայն տեղեկանալով, որ ներկայացված տեխնիկական բնութագիրը վերաբերելի է այլ մրցույթի, այլևս չի կարողացել շտկում կատարել, քանի որ անհնար է դարձել eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկել այլ փաստաթուղթ և նույն օրը արդեն իսկ շտկված ճիշտ տարբերակը Ֆ/Ա Իշխան Միրզոյանը ուղարկել է ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում նշված՝ «artsrun.vardanyan@yerevan.am» էլ. փոստի հասցեին:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու միտում, քանի որ վերջինս Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 7.10 կետի 3-րդ ենթակետով սահմանված պարտավորությունները կատարելու նպատակով ձեռնարկել է արձանագրված հնարավոր միջոցները և պահանջվող փաստաթուղթը սահմանված ժամկետում ուղարկել է ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում նշված՝ «artsrun.vardanyan@yerevan.am» էլ. փոստի հասցեին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.01.2019թ. թիվ 26-3/97-19 գրությամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**